

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

1

“Տէրոց խօսքը՝ որ բուղդուեցաւ Փաթուէլի որդիին՝ Յովէլի..”

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Կ'ՈՂԲԱՅ ՀՈՒՆՁՔԻ ԱԽԵՐՈՒԽԻՆ ՎՐԱՅ

- 2 «Լսեցէ՛ք ասիկա, ո՞վ ծերեր.
Ունկնդրեցէ՛ք, ո՞վ երկրի բոլոր բնակիչներ.
Միթէ այսպիսի բան պատահա՞ծ է ծեր օրերուն մէջ,
Կամ ծեր հայրերուն օրերուն մէջ:
- 3 Պատմեցէ՛ք ասիկա ծեր որդիներուն,
Ու ծեր որդիները՝ իրենց որդիներուն,
Եւ անոնց որդիները՝ յետագայ սերունդին:
- 4 Ինչ որ խառնիճը թողուց՝ մարախը կերաւ,
Ինչ որ մարախը թողուց՝ ջորեակը կերաւ,
Ինչ որ ջորեակը թողուց՝ գրուիճը կերաւ»:
- 5 Արթնցէ՛ք, ո՞վ գինովներ, ու լացէ՛ք.
Գոռացէ՛ք, ո՞վ բոլոր գինի խմողներ,
Քանի որ քաղցուն ծեր բերանէն կտրուեցաւ:
- 6 Արդարեւ իմ երկրիս վրայ
Հզօր եւ անթիւ ազգ մը բարձրացաւ.
Անոր ակռաները առիւծի ակռաներ են,
Եւ ան մատակ առիւծի ժանիքներ ունի:
- 7 Ան իմ որթատունկս աւերեց.
Թզենիս կոտրտեց,
Զայն բոլորովին կեղուեց եւ ստապալեց.
“Որթատունկին ուռերը ճերմկցան:
- 8 Ողբա՛քուրծ հագած” կոյսի մը պէս,
Որ իր երիտասարդութեան պիունցեալին վրայ կ'ողբայ:
- 9 Հացի ընծան ու թափելիք նուէրը Տէրոց տունէն կտրուեցան.
Տէրոց պաշտօնը կատարող քահանաները կը սգան:
- 10 Արտերը հյուպանացան, հողը սուգ կը պահէ.
Արդարեւ ցորենը բփճացաւ,

“ԵՐՈ.՝ ԵՀՈՎԱՅԻ

ԲԵՐՈ.՝ ԵԴԱՄ

ԳԵՐՈ.՝ ԳԵՏԻՅԱ ԱԵՏԵՑ

ԵՐՈ.՝ ԱՆՈՐ

ՋԵՐՈ.՝ ՋՈՒՐՃՈՎ ԳՈՄԵՆՈՐՈՒԱԾ

ՄԵՐՈ.՝ ՄԻՐՈԳ

ԿԵՐՈ.՝ ԿՈՐՃԱՆԵցան

ԼԵՐՈ.՝ ԼՈՐՃԱՆԵցաւ

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Քաղցուն ՞հատաւ, իւղը ծսպառեցաւ:

- 11 Ամչցէք, ո՞վ երկրագործներ,
Գոռացէք, ո՞վ այգեգործներ,
Թէ՛ ցորենին համար եւ թէ գարիին համար,
Քանի որ արտերուն հունձքը փճացաւ:
12 Որթատունկը չորցաւ ու թզենին թօշնեցաւ,
Նոնենին, արմաւենին, խնձորենին,
Արտին բոլոր ծառերը չորցան.

Այսպէս՝ մարդոց որդիներէն բերկրանքը ՞հեռացաւ:

- 13 ՞Թուրծ հագէք“ եւ հեծեծեցէք, ո՞վ քահանաներ.
Գոռացէք, ո՞վ զոհասեղանին պաշտօնը կատարողներ.
Եկէք, ո՞վ իմ Աստուծոյս սպասարկուները,
Քուրծերու մէջ գիշերեցէք,
Քանի որ հացի ընծան ու թափելիք նուէրը
Զեր Աստուծոյն տունէն ՞դադրեցան:

- 14 Ծոմապահութիւն ծյայտարարեցէք,
Տօնախմբութեան հրաւիրեցէք.
Երէցներն ու երկրին բոլոր բնակիչները
Հաւաքեցէք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն տունը,
Եւ աղաղակեցէք Տէրոջ:

- 15 Վայ այս օրուան համար,
Քանի որ Տէրոջ օրը մօտ է.
Ան պիտի գայ որպէս Ամենակարողէն դրկուած կործանում:
16 Ահա՝ մեր աշքերուն առջեւէն կերակուրը ՞անհետացաւ,
Եւ մեր Աստուծոյն տունէն՝ ուրախութիւնն ու խայտանքը:
17 Սերմնահատիկները մգլոտեցան ՞հողին չոր “ կոշտերուն տակ,
Ծտեմարանները ծպարապ մնացին“, ամբարները քանդուեցան,
Քանի որ ցորենը ՞խորշակահար եղաւ”:

» **Եբր.**՝ չորցաւ

ծ **Եբր.**՝ ուժաթափեցաւ

հ **Եբր.**՝ ցամքեցաւ

լ **Եբր.**՝ Քուրծով գօտեւորուեցէք

լ **Եբր.**՝ արգիլուեցան, կամ մերժուեցան

ծ **Եբր.**՝ սրբացուցէք դուք ձեզի

կ **Եբր.**՝ կտրեցաւ

հ **Եբր.**՝ իրենց

ծ **Եբր.**՝ ամայացան

ո **Եբր.**՝ չորցաւ

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- 18 Ի՞նչպէս կը հառաջեն անասունները.
Արջառներուն նախիրները շփոթած են,
Որովհետեւ անոնց համար արօտ չկայ.
Ոչխարներուն հօտերն ալ ճնուաղեցան:
- 19 Քեզի՝ պիտի գոչեմ, ո՞վ Տէր,
Քանի որ կրակը սպառեց անապատին մարգագետինները,
Ու բոցը բռնկեցուց դաշտին բոլոր ծառերը:
- 20 Դաշտին անասուններն անգամ քեզի կը գոչեն,
Որովհետեւ ջուրերուն վտակները ցամքած են,
Եւ կրակը սպառած է անապատին մարգագետինները:

ՄԱՐԱԽԸ ՏԷՐՈՋ ՕՐՈՒԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

2

- Ճեփո՞ր հնչեցուցէք Սիոնի մէջ,
Գոռացէ՞ք սուրբ լերանս վրայ.
Երկրին բոլոր բնակիչները թող սասանին,
Քանի որ Տէրոջ օրը կու գայ. արդարեւ մօտ է
- 2 Խաւարի ու մթուլթեան օրը,
Ամպի եւ մառախուղի օրը:
Ինչպէս արշալոյսը լեռներուն վրայ կը տարածուի,
Այնպէս բազմաթիւ ու հզօր ժողովուրդ մը պիտի գայ,
Որուն նմանը երբեք չէ եկած,
Եւ ատկէ ետք անգա՞մ մըն ալ պիտի չգայ
Մինչեւ յետագայ սերունդներուն տարիները:
- 3 Անոր առջեւէն կրակը պիտի սպառէ,
Իսկ ետեւէն բոցը պիտի բռնկեցնէ.
Երկիրը անոր առջեւ Եղեմի ՚դրախտին պէս էր,
Բայց անոր ետեւը ամայի անապատ պիտի ըլլայ.
Անկէ ոչինչ պիտի ազատի:
- 4 Անոնց տեսքը ծիերու տեսքին պէս է,
Անոնք ծիաւորներու պէս պիտի արշաւեն:
- 5 **Անոնց աղմուկը** լեռներու գագաթներուն վրայ ցատկուտող կառքերու աղմուկին պէս է,
Մղեղը սպառող կրակի բոցի աղմուկին պէս.
Պատերազմի շարուած հզօր ժողովուրդի պէս **պիտի գան**:
- 6 Անոնց բառջեւ ժողովուրդները պիտի սարսափին,
Բոլոր երեսները պիտի գունատին:
- 7 Անոնք զօրաւորներու պէս պիտի արշաւեն,
Պատերազմիկներու պէս պարիսպներու վրայ պիտի մագլցին.
Իլրաքանչիւրը իր ճամբայէն պիտի երթայ,

⁶ Եբր.՝ ամայացան

⁷ Կամ պարտէզին

⁸ Եբր.՝ երեսէն

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- Իրենց ուղիները պիտի չփոխեն:
- 8 Զիրար պիտի չհրեն,
Իրաքանչիւրը իր պողոտայէն պիտի երթայ.
Նիզակներու մէջէն պիտի յարձակին՝ առանց իրենց **խոյանքը** Դկասեցնելու:
- 9 Քաղաքին մէջ պիտի խոյանան
Ու պարիսպին վրայ պիտի արշաւեն.
Տուներուն վրայ պիտի մագլցին,
Գողի պէս պատուհաններէն պիտի մտնեն:
- 10 Անոնց առջեւ երկիրը պիտի սարսի,
Երկինքը պիտի ցնցուի,
Արեւն ու լուսինը պիտի մթագնին,
Աստղերը իրենց պայծառութիւնը պիտի ծածկեն:
- 11 Տէրը իր գօրագունդին առջեւ իր ծայնը **լսել** պիտի տայ,
Քանի որ անոր բանակավայրը շատ մեծ "է,
Եւ անոր հրահանգը գործադրողը հզօր է.
Արդարեւ Տէրոց օրը մեծ ու յոյժ ահաւոր է,
Ո՞վ կրնայ հանոր տոկալ":

ԿՈՉ ՄԸ ԶՂՋՈՒՄԻ

- 12 Ուստի հիմա ալ Տէրը **սա'** կը պատգամէ.
«Վերադարձէ՛ք ինձի ձեր ամբողջ սիրտով՝
Ծոմապահութեամբ, լացով ու կոծով։
- 13 Զեր սիրտե՛րը պատոեցէք, եւ ո՛չ թէ ձեր հագուստները,
Ու վերադարձէ՛ք Տէրոց՝ ձեր Աստուծոյն.
Արդարեւ ան ողորմած եւ գթած է,
Համբերատար ու շատ կարեկից,
Եւ չարիքէն կը հրաժարի։
- 14 Ո՞վ գիտէ, թերեւս ան բտարհամոզուի ու հրաժարի,
Եւ իր ետեւէն օրհնութիւն թողու,
Որպէսզի կարենաք Տէրոց՝ ձեր Աստուծոյն
Հացի ընծայ ու թափելիք նուէր **մատուցանել»:**
- 15 Սիննի մէջ շեփո՞ր հնչեցուցէք,
Ծոմապահութիւն թյայտարարեցէք,

^գ **Եբր.**՝ իյնան

^դ **Եբր.**՝ կտրելու

^ե **Եբր.**՝ հաւաքեն

^գ **Կամ'** բանակը յոյժ բազմաթիւ

^է **Եբր.**՝ զայն պարունակել

^ը **Եբր.**՝ դառնայ

^թ **Եբր.**՝ սրբացուցէք դուք ձեզի

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆԸ

- Տօնախմբութեան հրակրեցէք.
- 16 Ժողովուրդը հաւաքեցէք, համախմբումը սրբացուցէք, երէցները հաւաքեցէք.
Երախաներն ու ծծկեր մանուկները հաւաքեցէք.
Փեսան իր ներքին սենեակէն թող ելլէ,
Եւ հարսը՝ իր առագաստէն:
- 17 Տէրոջ պաշտօնը կատարող քահանաները
Թող լան ներքնագաւիթին ու զոհասեղանին մէջտեղ,
Եւ ըսեն. «Ո՞վ Տէր, խղճա՛քու ժողովուրդիդ,
Ու մի՛ նախատեր քու ժառանգութիւնդ,
Որ ՞հեթանոսները անոնց վրայ տիրեն:
Ինչո՞ւ ժողովուրդներուն մէջ ըսեն.
“Ո՞ւր է անոնց Աստուածը»:

ՏԷՐԸ ԿԸ ՎԵՐՍԱՍԱՏԸ ԵՐԿՐԻՆ ԱՐԳԱՍԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

- 18 Այն ատեն Տէրը նախանձախնդիր պիտի ըլլայ իր երկրին համար,
Ու պիտի արգահատի իր ժողովուրդին վրայ:
19 Տէրը պիտի պատասխանէ եւ իր ժողովուրդին ըսէ.
«Ահա՛ ես ծեզի ցորեն, քաղցու եւ իւղ պիտի դրկեմ,
Որ անոնցմով կշտանաք:
Զեզ անգա՞մ մըն ալ հեթանոսներուն մէջ նախատինքի **առարկայ** պիտի չդարձնեմ:
20 Հիւսիսէն **եկող թշնամին** ծեզմէ պիտի հեռացնեմ,
Ու զայն չոր եւ ամայի երկիր մը պիտի աքսորեն.
Անոր ՚յառաջապահները դէպի արեւելեան ծովը պիտի ըլլան,
Իսկ վերջապահները՝ դէպի արեւմտեան ծովը:
Անոր գարշահոտութիւնը պիտի բարձրանայ,
Անոր ժանտահոտութիւնը պիտի լտարածուի,
Որովհետեւ մեծագործութիւններ կատարեց:
21 Մի՛ վախնար, ո՞վ ՚երկիր. խայտա՛ եւ ուրախացի՛ր,
Քանի որ Տէրը մեծագործութիւններ պիտի կատարէ:
22 Մի՛ վախնաք, ո՞վ դաշտի անասուններ,
Որովհետեւ անապատին մարգագետինները պիտի ՚կանաչնան,
Ծառը իր պտուղը պիտի բերէ,
Թզենին ու որթատունկը իրենց հարստութիւնը պիտի տան:
23 Իսկ դո՛ք, ո՞վ Սիոնի որդիններ,
Խայտացէ՛ք եւ ուրախացէ՛ք Տէրոջմով՝ ծեր Աստուծմով,
Քանի որ ան ՚ատենին ծեզի պիտի տայ առաջին անձրեւը,

^ծ **Կամ՝** ազգերը

^հ **Երը.՝** երեսը

^լ **Երը.՝** բարձրանայ

^{իւ} **Երը.՝** հող

^ծ **Երը.՝** արտադրեն

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Զեզի տեղատարակի պիտի՝ հոսեցնէ, առաջին անձրեւն ու վերջին անձրեւը՝ նախկինին պէս:

24 Կալերը ցորենով պիտի լեցուին,
Կարասները քաղցուով եւ իւղով պիտի յորդին:

25 Զեզի պիտի հատուցանեմ այն տարիներուն պտուղները,
Որոնք մարախսը, ջորեակը, գրուիճն ու խառնիճը կերան,
Այսինքն իմ մեծ զօրագունդս՝ որ ձեր մէջ դրկեցի:

26 Առատօրէն պիտի ուտէք եւ կշտանաք,
Ու **Տէրոց՝** ձեր Աստուծոյն անունը պիտի գովաբանէք,
Որ ձեզի համար սքանչելիքներ ըրաւ.
Իմ ժողովուրդս երբեք պիտի չամչնայ:

27 Պիտի գիտնաք թէ ես իսրայէլի մէջ եմ,
Թէ ես եմ **Տէրը՝** ձեր Աստուածը, եւ թէ ուրիշ մը չկայ.
Իմ ժողովուրդս երբեք պիտի չամչնայ»:

ՏԷՐՈՉ ՕՐԸ

28 «Ատկէ ետք՝
Իմ Հոգիս ամէն մարմինի վրայ պիտի թափեմ.
Զեր որդիներն ու աղջիկները պիտի մարգարէանան,
Զեր ծերերը երազներ պիտի չտեսնեն,
Զեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն:
29 «Ծառաներուն վրայ եւ ճաղախիններուն վրայ ալ
Այդ օրերը իմ Հոգիս պիտի թափեմ:
30 Երկինքի մէջ ու երկրի վրայ ճնշաններ պիտի դնեմ,
Արիւն, կրակ եւ մուխի սիւներ.
31 Արեւը խաւարի պիտի փոխուի, ու լուսինը՝ արիւնի,
Դեռ **Տէրոց** մեծ եւ ահաւոր օրը չեկած:
32 Ո՞վ որ **Տէրոց** անունը կանչէ՝ պիտի փրկուի,
Քանի որ **Սիոն** լերան վրայ ու երուսաղէմի մէջ ազատում պիտի ըլլայ, –
Ինչպէս **Տէրը** ըսաւ, –
Նաեւ այն վերապրողներուն մէջ՝ որ **Տէրը** պիտի կանչէ»:

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԴԱՏԵ ԱԶԳԵՐԸ

3

⁴ **Եբր.**՝ արդարութեամբ

⁵ **Եբր.**՝ իշեցնէ

⁶ **Եբր.**՝ երազեն

⁷ **Եբր.**՝ Ստրուկներուն

⁸ **Եբր.**՝ ստրկուհիներուն

⁹ **Եբր.**՝ հրաշալիքներ

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- «Արդարեւ ահա՝ այդ օրերը եւ այդ ատենք,
Երբ ես Յուղան ու Երուսաղէմը գերութենէն վերադարձնեմ,
- 2 Բոլոր ազգերը պիտի հաւաքեմ,
Եւ զանոնք աշուակատի հովիտը պիտի իշեցնեմ:
Հոն անոնց հետ դատ պիտի վարեմ
Իմ ժողովուրդիս ու ժառանգութեանս՝ Իսրայէլի մասին,
Որ ազգերու մէջ ցրուեցին,
Եւ իմ երկիրս բաժնեցին:
- 3 Իմ ժողովուրդիս վրայ վիճակ ձգեցին,
Տղեկը տուին իբր պոռնիկի վարձատրութիւն,
Աղջնակը ծախեցին գինիի համար, որպէսզի խմեն»:
- 4 «Դուք ալ ի՞նչ գործ ունիք ինծի հետ,
Ո՞վ Տիւրոս ու Սիդոն, եւ ՞Փղշտացիներու բոլոր շրջանները:
Սիթէ դուք ինծի փոխարէ՞ն կը հատուցանէք.
Եթէ ինծի հատուցանէք,
Արագորէն եւ շտապելով ձեր հատուցումը պիտի վերադարձնեմ ձեր գլուխը:
- 5 Արդարեւ իմ արծաթս ու ոսկիս յափշտակեցիք,
Իմ վայելչագեղ, ցանկալի բաներս ձեր մեհեանները տարիք,
- 6 Յուղայի որդիներն ու Երուսաղէմի որդիները
Յոյներու որդիներուն ծախեցիք,
Որպէսզի զանոնք իրենց հողամասէն հեռացնէք:
- 7 Ահա՝ ես զանոնք պիտի ։վերադարձնեմ այն տեղէն՝ ուր դուք զանոնք ծախեցիք,
Եւ ձեր հատուցումը ձեր գլուխը պիտի վերադարձնեմ.
- 8 Զեր որդիներն ու աղջիկները Յուղայի որդիներուն պիտի ծախեմ,
Եւ անոնք ալ հեռաբնակ ազգի մը՝ Սաբայեցիներուն պիտի ծախեն զիրենք»,
Որովհետեւ Տէրը խօսեցաւ:
- 9 «Սա՝ յայտարարեցէք ազգերուն մէջ.
“Պատերա՞զմ ՞պատրաստեցէք,
Արթնցուցէք զօրաւոր մարդիկը.
Թող մօտենան ու բարձրանան բոլոր պատերազմիկները»:
- 10 Զեր խոփերէն սուրե՛ր դարբնեցէք,
Եւ ձեր յօսոցներէն՝ նիզակներ:
Տկար եղողը թող ըսէ. “Ես զօրաւոր եմ”:
- 11 Շուտո՞վ եկէք, ո՞վ բոլոր շրջակայ ազգեր, ու հաւաքուեցէ՛ք»:
Հոն իշեցուր քու զօրաւորներդ, ո՞վ Տէր:
- 12 «Ազգերը թող արթննան եւ Յուղակատի հովիտը բարձրանան,
Քանի որ հոն պիտի բազմիմ՝ բոլոր շրջակայ ազգերը դատելու համար:

^ա Այսինքն՝ Տէրոց դատաստանին

^բ Եբր.՝ Պաղեստինի

^գ Եբր.՝ արթնցնեմ

^դ Եբր.՝ որդիներուն ձեռքը

^ե Եբր.՝ սրբացուցէք

ՅՈՎԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- 13 Երկարեցէք մանգաղը, քանի հունձքը հասած է.
Եկէ՛ք, իշէ՛ք, քանի հնձանը լեցուեցաւ,
Գիշի կարասները կը յորդին.
Արդարեւ անոնց չարութիւնը մեծ է:
- 14 Բազմութիւններ, բազմութիւններ **կը հաւաքուին** Վճռի հովիտին մէջ,
Որովհետեւ Տէրոջ օրը մօտ է Վճռի հովիտին մէջ:
- 15 Արեւն ու լուսինը պիտի մթագնին,
Աստղերը իրենց պայծառութիւնը պիտի գծածկեն.
- 16 **Տէրը Սիոնէն** պիտի գոչէ,
Ու Երուսաղէմէն իր ծայնը **լսել** պիտի տայ.
Երկինքն ու երկիրը պիտի շարժին,
Բայց **Տէրը** իր ժողովուրդին ապաւէն պիտի ըլլայ,
Եւ հսրայէլի որդիներուն՝ ամրոց:
- 17 **Պիտի գիտնաք թէ են եմ Տէրը՝ ծեր Աստուածը,**
Ու կը բնակիմ իմ սուրբ լերանս՝ Սիոնի մէջ:
Երուսաղէմ սուրբ պիտի ըլլայ,
Անգամ մըն ալ օտարներ անկէ պիտի չանցնին:
- 18 Այդ օրը լեռները քաղցու պիտի կաթեցնեն,
Բլուրները կաթ պիտի Հոսեցնեն”,
Եւ Յուդայի բոլոր Պվտակները ջուրեր պիտի հոսեցնեն.
Տէրոջ տունէն աղբիւր մը պիտի Քիսի,
Ու Սատիմի ձորը պիտի ջրէ:
- 19 Եգիպտոս պիտի ամայանայ,
Եղովմ ամայի անապատ պիտի ըլլայ՝
Յուդայի որդիներուն եղած բռնութեան համար,
Քանի որ անոնց երկրին մէջ անմեղ արիւն թափեցին:
- 20 Բայց Յուդայա յալիտեան պիտի բնակուի,
Ու Երուսաղէմ՝ դարէ դար “:
- 21 **Պիտի ւմաքրեմ անոնց արիւնը՝ որ մաքրած չէի,**
Եւ **Տէրը Սիոնի մէջ պիտի բնակի»:**

^գ **Եբր.**՝ հաւաքեն

^հ **Եբր.**՝ մոնչէ

^լ **Եբր.**՝ քալեցնեն

^մ **Կամ**՝ ձորերը

^գ **Եբր.**՝ դուրս ելլէ

^ի **Եբր.**՝ սերունդէ սերունդ

^լ **Եբր.**՝ անպարտ ընեմ